

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
պարոն ՍԱՄՎԵԼ ՆԻԿՈՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Նիկոյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Խաչիկ Հարությունյանի, Հեղինե Բիշարյանի և Մարգարետունի Մանուկյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Հողի հարկի արտոնությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» և «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ:

Հայաստանի Հանրապետության սահմանամերձ բնակավայրերի գյուղատնտեսական հողերի մասով հողի հարկի արտոնություն սահմանելու հարցը քննարկելիս՝ անհրաժեշտ է հաշվի առնել այն, որ «Հողի հարկի արտոնությունների մասին» Հայաստանի Հանրապետության գործող օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն Հայաստանի Հանրապետության սահմանամերձ բնակավայրերի՝ մարտական գործողությունների

հետևանքով չօգտագործվող հողատարածքները 1994 թվականից ազատված են հողի հարկից, որոնց կազմում ընդգրկված են նաև գյուղատնտեսական նշանակության հողերը:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 21-ի N 163 որոշմամբ հաստատվել է Հայաստանի Հանրապետության՝ մարտական գործողությունների հետևանքով չօգտագործվող հողատարածքներ ունեցող սահմանամերձ բնակավայրերի ցանկը: Այդ ցանկում ընդգրկված բնակավայրերի հողի հարկը կազմում է 88,274.0 հազ. դրամ (որի զգալի ծավալը կազմում է գյուղատնտեսական նշանակության հողերի հարկը), իսկ գույքահարկը՝ 48,116.8 հազ. դրամ: Այդ գումարները կազմում են սահմանամերձ համայնքների բյուջեների եկամուտների զգալի մասը՝ հողի հարկի մասով՝ միջինը 37 տոկոս (առանձին համայնքների համար այդ ցուցանիշը հասնում է 74 տոկոսի), իսկ գույքահարկի մասով՝ միջինը 20 տոկոս (առանձին համայնքների համար՝ մինչև 45 տոկոս): Համայնքները նշված գումարներից զրկելը կնշանակի ծայրաստիճան նվազեցնել տեղական ինքնակառավարման մարմինների կողմից բնակչությանը մատուցվող ծառայությունների՝ առանց այդ էլ ոչ բավարար քանակը:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ սահմանամերձ համայնքների զարգացմանն ուղղված ծրագրեր իրականացվել են Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի, «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ԾԻԳ» պետական հիմնարկի, «Գյուղատնտեսական բարեփոխումների աջակցության ԾԻԳ» պետական հիմնարկի, ինչպես նաև «ՀՄՀ-Հայաստան»-ի կողմից, և սահմանամերձ համայնքներում սուկա տարաբնույթ ոլորտային հիմնախնդիրներ լուծելու համար ֆինանսավորման աղբյուր ծառայել են ոչ միայն Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցները, այլև միջազգային կազմակերպությունների և դոնորների տրամադրած վարկերն ու դրամաշնորհները:

ՀՄՀ-ի կողմից Հայաստանի Հանրապետության սահմանամերձ տարածաշրջաններում իրականացվել է 45 ծրագիր՝ շուրջ 3 մլն ԱՄՆ-ի դոլար ընդհանուր արժեքով, այդ

թվում՝ 20 ծրագիր՝ խմելու ջրի, 13 ծրագիր՝ ոռոգման, 4 ծրագիր՝ կոյուղագծերի, 2 ծրագիր՝ ճանապարհաշինության, 2 ծրագիր՝ հեռուստաաշտարակի կառուցման, մեկական ծրագիր՝ դպրոցաշինության, համայնքային կենտրոնի կառուցման, հեռախոսակապի, հեղեղատարի կառուցման:

Այսօր սահմանամերձ տարածաշրջանների համայնքների զարգացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի, Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի և «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ԾԻԳ» պետական հիմնարկի կողմից իրականացվում են խմելու և ոռոգման ջրերի, կոյուղագծերի, ճանապարհաշինության, հեռուստաաշտարակի կառուցման, դպրոցաշինության, համայնքային կենտրոնի կառուցման, հեռախոսակապի, հեղեղատարի կառուցման ծրագրեր: Մասնավորապես, «Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի (IFAD) ծրագրերի շրջանակներում ներկայումս իրականացվում է ոռոգման ջրագծի կառուցումը, որի արդյունքում Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Կոթիի, Ոսկեպարի, Բաղանիսի և Ոսկևանի սահմանամերձ համայնքներում ոռոգելի կդառնա շուրջ 1100 հեկտար հողատարածք:

Հայաստանի Հանրապետության կառավարության համապատասխան որոշմամբ հաստատվել է Հայաստանի Հանրապետության սահմանամերձ բնակավայրերում ուրբակոծությունների հետևանքով վնասված բնակելի տների բնակիչների բնակարանային պայմանների բարելավման ծրագիրը, որով նախատեսվել է պետական աջակցության միջոցով վերականգնել Հայաստանի Հանրապետության սահմանամերձ բնակավայրերի՝ ուրբակոծությունների հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակելի տները, ինչպես նաև ամրապնդել բնակավայրերը:

Սահմանամերձ տարածաշրջանների հիմնախնդիրների լուծման համար Հայաստանի Հանրապետության կառավարության համապատասխան որոշումներով ընդունվել են Հայաս-

տանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրիի տարածաշրջանի, Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի հիմնախնդիրների լուծման միջոցառումների իրականացման և մի շարք այլ ծրագրեր:

Հայաստանի Հանրապետության մարզերում, մասնավորապես, սահմանամերձ տարածաշրջաններում արտագաղթի միտումը կանխելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի համար գերակա խնդիր է սահմանվել Հայաստանի Հանրապետության մարզերում երիտասարդ ընտանիքների կողմից մատչելի գներով բնակարանների ձեռքբերմանը միտված պետական նպատակային բնակարանաշինության կազմակերպումը, որով ակնկալվում է Հայաստանի Հանրապետության մարզերում երիտասարդ ընտանիքներին մատչելի գներով բնակարանների ձեռքբերման հնարավորությունների ստեղծում, արտագաղթի նվազեցում և համայնքների զարգացում:

Հարկ ենք համարում նաև նշել, որ 2008-2011 թվականներին Հայաստանի Հանրապետության կառավարությունը, հարկաբյուջետային բնագավառում քաղաքականություն իրականացնելիս, նպատակահարմար չի գտել առանձին դեպքերում (ֆիզիկական անձանց, իրավաբանական անձանց, տեղական ինքնակառավարման մարմիններին) հարկային արտոնություններ տրամադրելը: Բացառություն են կազմել այն միջոցառումները, որոնք ունեցել են ընդգծված հակաճգնաժամային բնույթ: Ուստի, վերջին տարիներին առանձին համայնքների կամ համայնքների խմբի որևէ հարկատեսակի մասով հարկային արտոնություններ չեն տրամադրվել: Փաստ է, որ մի շարք ոչ սահմանամերձ համայնքներ իրենց հնարավորություններով զիջում են սահմանամերձ համայնքներին: Վերջին տարիներին հարկային արտոնություն տրամադրվել է ոչ թե առանձին համայնքների, այլ Հայաստանի Հանրապետության բոլոր համայնքներին, այդ թվում՝ սահմանամերձներին:

Կից ներկայացվում են Հայաստանի Հանրապետության 2008, 2009, 2010 և 2011 թվականների համար Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով սահմանամերձ բնակավայրերի գծով նախատեսված և կատարված ծախսերը:

Ելնելով շարադրվածից, Հայաստանի Հանրապետության կառավարությունը նպատակահարմար չի համարում ներկայացված օրենքների նախագծերի փաթեթի ընդունումը:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքների նախագծերի փաթեթը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից գեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի առաջին տեղակալ Վաչե Տերտերյանը:

Կից ներկայացվում են 2002 թվականի փետրվարի 21-ի N 163 որոշմամբ սահմանված համայնքների հողի հարկի և գույքահարկի 2011 թվականի հաշվարկային ցուցանիշների մասին տեղեկանքը և օրենքների նախագծերի կարգավորման ազդեցության գնահատականը:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

**ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

««Հողի հարկի արտոնությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» և ««Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի ընդունման դեպքում

««Հողի հարկի արտոնությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» և ««Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի ընդունումը առողջապահության բնագավառի վրա ազդեցություն չի ունենա:

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հողի հարկի արտոնությունների մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» և
«Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում
լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների
նախագծերի փաթեթի բնապահպանության
բնագավառում կարգավորման

1. «Հողի հարկի արտոնությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» և «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի (այսուհետ՝ օրենքների) փաթեթի ընդունման արդյունքում շրջակա միջավայրի օբյեկտների՝ մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

2. Օրենքների նախագծերի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

3. Օրենքների նախագծերը բնապահպանության ոլորտին չեն առնչվում, այդ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին չեն հակասում:

Օրենքների կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հողի հարկի արտոնությունների մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» և «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Հողի հարկի արտոնությունների մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» և «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի (այսուհետ՝ Նախագիծ) գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ *Նախագիծը վերաբերում է ՀՀ սահմանամերձ բնակավայրերի գյուղատնտեսական նշանակության հողերը հողի հարկից ազատելուն* և Նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա ազդեցություն *չի նախատեսվում*:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հողի հարկի արտոնությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Հողի հարկի արտոնությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերով (այսուհետ՝ Նախագծեր) սահմանամերձ (Ադրբեջանի Հանրապետության հետ) բնակավայրերը ազատվում են գույքահարկից, իսկ սահմանամերձ բնակավայրերի գյուղատնտեսական նշանակության հողերը՝ հողի հարկից:

Նախագծերի մրցակցության բնագավառում ազդեցության գնահատման գործընթացի նախնական փուլում պարզվել է, որ Նախագծերով կարգավորվող շրջանակները չեն առնչվում ապրանքային շուկաների հետ, ուստի և Նախագծերի ընդունմամբ որևէ ապրանքային շուկայում մրցակցային դաշտի վրա ազդեցություն չի կարող:

Հիմք ընդունելով նախնական փուլի արդյունքները՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով Նախագծերի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա *ազդեցություն չհայտնաբերվելու* եզրակացություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հողի հարկի արտոնությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» և «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի /այսուհետ՝ Նախագծեր/ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման

Նախագծերի՝ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումն իրականացվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի՝ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» N 18-Ն որոշման համաձայն:

Նախագծերը սոցիալական պաշտպանության ոլորտում ունեն դրական ազդեցություն:

ՀԱԿԱԿՈՒՌՈՒՊՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հողի հարկի արտոնությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» և «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի վերաբերյալ

«Հողի հարկի արտոնությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» և «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերն իրենց մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չեն պարունակում:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

«Հողի հարկի արտոնությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» եւ «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Հողի հարկի արտոնությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով առաջարկվում է հողի հարկի գծով արտոնություններ սահմանել նաեւ Հայաստանի Հանրապետության սահմանամերձ (Ադրբեջանի հարեւանությամբ) բնակավայրերի գյուղատնտեսական նշանակության հողերի համար:

«Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով առաջարկվում է գույքահարկի արտոնություն սահմանել նաեւ Հայաստանի Հանրապետության սահմանամերձ (Ադրբեջանի հարեւանությամբ) բնակավայրերի համար: Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ ներկայացված նախագծերի ընդունման դեպքում տեղի կունենա տեղական բյուջեների եկամուտների նվազում:

«Համայնքի բյուջեի եկամուտները նվազեցնող՝ Հայաստանի Հանրապետության օրենքների կիրարկման արդյունքում համայնքի բյուջեի եկամուտների կորուստները պետության կողմից փոխհատուցելու կարգի մասին» ՀՀ օրենքով համայնքի բյուջեի եկամուտների նվազեցումը ենթակա է պետական բյուջեից փոխհատուցման՝ օրենքն ուժի մեջ մտնելու տարվան եւ դրան հաջորդող երկու տարիների համար:

Հաշվի առնելով, որ փոխհատուցման ժամանակահատվածի յուրաքանչյուր տարվա համար պետության կողմից համայնքների բյուջեներին փոխհատուցման ենթակա գումարները հատկացվում են տվյալ տարվան հաջորդող երկրորդ տարվա պետական բյուջեից, համայնքների եկամուտների նվազումը տեղի կունենա օրենքի ընդունման տարվան հաջորդող երկրորդ տարվանից սկսած:

Միաժամանակ, հաշվի առնելով վերոնշյալ հողերի վերաբերյալ տեղեկատվության բացակայությունը նախագծերի բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության կոնկրետ գնահատում հնարավոր է իրականացնել ՀՀ կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 28-ի նիստի N 42 արձանագրության 1-ին կետով հավանության արժանացած «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերը՝ բացառությամբ «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի, ներկայացնելու» ուղեցույցի 3-րդ կետով սահմանված ձեւաչափով ներկայացված տեղեկանքի եւ անհրաժեշտ հաշվարկ հիմնավորումների առկայության պարագայում:

Նախագծերի թե ընդունումը եւ թե չընդունումը ՀՀ պետական բյուջեի եւ ՀՀ համայնքների բյուջեների ծախսերի եւ բյուջետային քաղաքականության փոփոխման չի հանգում:

Հաշվետվություն

Հայաստանի Հանրապետության 2008 թվականի պետական բյուջեով սահմանամերձ բնակավայրերի գծով ծախսերի վերաբերյալ՝ ըստ ծրագրերի, ծախսատեսակների և կատարողների (առանց նպատակային վարկերի և դրամաշնորհների, Մեծ Բրիտանիայի ու Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության կողմից Հայաստանի Հանրապետությանը ֆինանսական օգնության կարգով տրամադրված նվիրաբերության, ինչպես նաև ԱՄՆ կառավարության կողմից տրամադրված 'Հազարամյակի մարտահրավեր' դրամաշնորհային միջոցների հաշվին 2008 թվականին իրականացվելիք ծախսերի)

Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման			հազար դրամ				
3	6	4	5	6	7	8	
1	2	3	4	5	6	7	8
			ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ	Տարեկան պլան*	Տարեկան ճշտված պլան**	Փաստ	Կատարման % ճշտված պլանի նկատմամբ
			4	5	6	7	8
			Ընդամենը	5,904,547.7	4,793,156.5	4,767,378.0	99.5%
			այդ թվում՝				
			-Շենքերի և շինությունների շինարարություն	709,896.0	795,259.4	790,445.5	99.4%
			-Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	4,614,340.2	3,996,997.1	3,976,090.3	99.5%
			#NAME?	82,366.1	900.0	842.2	93.6%
			-Այլ կապիտալ ծախսեր	497,945.4	-	-	
			այդ թվում՝				
			<u>ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ</u>	<u>38,000.0</u>	<u>38,000.0</u>	<u>35,942.0</u>	<u>94.6%</u>
			այդ թվում՝				
			-Շենքերի և շինությունների շինարարություն	8,000.0	8,000.0	7,985.0	99.8%
			-Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	29,100.0	29,100.0	27,114.8	93.2%

			-Նախագծահետազոտական, գեոդեզիա- քարտեզագրական աշխատանքներ այդ թվում՝	900.0	900.0	842.2	93.6%
04	02	01	Գյուղատնտեսական նշականության այլ օբյեկտների հիմնանորոգում այդ թվում՝	38,000.0	38,000.0	35,942.0	94.6%
			ՀՀ Գեոարքունիքի մարզ՝ Ճամբարակի տարածաշրջանային անասնաբուժական լաբորատորիա, այդ թվում՝	30,000.0	30,000.0	27,957.0	93.2%
			-Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	29,100.0	29,100.0	27,114.8	93.2%
			-Նախագծահետազոտական, գեոդեզիա-քարտեզագրական աշխատանքներ	900.0	900.0	842.2	93.6%
			ՀՀ Գեոարքունիքի մարզ՝ Վարդենիսի տարածաշրջանային անասնաբուժական լաբորատորիա, այդ թվում՝	8,000.0	8,000.0	7,985.0	99.8%
			-Շենքերի և շինությունների շինարարություն	8,000.0	8,000.0	7,985.0	99.8%
			ՀՀ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ այդ թվում՝	6,000.0	-	-	
			-Նախագծահետազոտական, գեոդեզիա- քարտեզագրական աշխատանքներ այդ թվում՝	6,000.0	-	-	
08	02	07	Հուշարձանների վերականգնման գծով պետական պատվեր, այդ թվում՝	6,000.0	-	-	
			‘Քարահունջ’ այդ թվում՝	6,000.0	-	-	
			-Նախագծահետազոտական, գեոդեզիա-քարտեզագրական աշխատանքներ	6,000.0	-	-	
			ՀՀ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ ԿԱՊԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ այդ թվում՝	3,919,990.2	3,307,354.0	3,307,353.8	100.0%
			-Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում այդ թվում՝	3,919,990.2	3,307,354.0	3,307,353.8	100.0%
			1.1.Միջպեղական նշանակության ա/ճանապարհներ, այդ թվում՝	2,273,390.0	2,067,707.8	2,067,707.6	100.0%

		-Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	2,273,390.0	2,067,707.8	2,067,707.6	100.0%
		այդ թվում՝				
		կմ253+280-կմ260+000 (Որոտան գյուղի վերջից մինչև Թասի լեռնանցք)	455,390.0	364,384.4	364,384.4	100.0%
		կմ260+000-կմ266+000 (Թասի լեռնանցքից մինչև Բարձրավանի խաչմերուկ)	404,000.0	335,921.2	335,921.2	100.0%
		<-26, Մոտեցում Մակարավանքի հուշարձանին /Աչաջուր-Մակարավանք/	200,000.0	199,946.5	199,946.5	100.0%
		<-11 Փոքր Վեդի-Լուսառատ-Եղեգնավան-Մ2 (Մ2-Փոքր Վեդի-Լուսառատ)	340,000.0	310,450.4	310,450.2	100.0%
		<-36 Իջևան-Նավուր-Բերդ-Այգեպար (հատված Թովուզ-Այգեպար)	404,000.0	387,005.3	387,005.3	100.0%
		<-40 Արենի-Խաչիկ-Գնեշիկ-Եղեգնաձոր, (հատված ՊԽ(Մ2)-Ամաղու)	470,000.0	470,000.0	470,000.0	100.0%
		1.3.Մարզային նշանակության ճանապարհներ, այդ թվում՝	1,646,600.2	1,239,646.2	1,239,646.2	100.0%
		-Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	1,646,600.2	1,239,646.2	1,239,646.2	100.0%
		այդ թվում՝				
		ՊԽ (Մ2)-Լիճք-Տաշտուն-ՊԽ(Մ2) (Մեղրի)	385,000.0	-	-	
		Մեղրաշեն-Փանիկ-Անուշավան-Գետափ (Արթիկ)	193,000.0	183,996.9	183,996.9	100.0%
		S-10-9 ՊԽ (Մ-16)-Ծաղկավան	47,075.6	47,075.6	47,075.6	100.0%
		S-1-42 ՊԽ(Մ-1)-Ագարակ-Դիան (Թալինի շրջ.)	191,024.6	191,024.6	191,024.6	100.0%
		S-8-49, ՊԽ/Մ-2/-Դավիթ Բեկ կմ4+152-կմ5+252 /Կապան/	40,000.0	40,000.0	40,000.0	100.0%
		Կապան-Վաչագան	230,000.0	230,000.0	230,000.0	100.0%
		Ա/6 S-10-22 Նոյեմբերյան-Դովեղ- Ադրբ. սահման կմ 0+800-կմ3+500	130,500.0	123,794.8	123,794.8	100.0%
		S-10-32, Հան. ճանապարհ-Ոսկեպար /Նոյեմբերյան/	95,000.0	90,261.2	90,261.2	100.0%
		S-10-7 Մոտեցում Սևքար գյուղին կմ1+00-կմ1+500	35,000.0	33,493.1	33,493.1	100.0%
		Մ2-Ագարակ-Ուժանիս (հարված Մ2-Ագարակ) /Կապան/	300,000.0	300,000.0	300,000.0	100.0%
		ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	723,846.0	787,705.1	782,905.7	99.4%
		այդ թվում՝				
		-Շենքերի և շինությունների շինարարություն	448,896.0	517,437.0	512,638.1	99.1%
		-Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	274,950.0	270,268.1	270,267.6	100.0%
		այդ թվում՝				

08	02	01	Գրադարանների հիմնանորոգում	40,000.0	39,767.1	39,767.1	100.0%
			այդ թվում՝				#DIV/0!
			-Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	40,000.0	39,767.1	39,767.1	100.0%
			այդ թվում՝				
			Սյունիքի մարզային գրադարան	40,000.0	39,767.1	39,767.1	100.0%
08	02	03	Մշակութային օբյեկտների հիմնանորոգում	25,000.0	24,879.5	24,879.0	100.0%
			այդ թվում՝				
			-Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	25,000.0	24,879.5	24,879.0	100.0%
			այդ թվում՝				
			Արարատի մարզ	25,000.0	24,879.5	24,879.0	100.0%
			գ. Լուսառառի մշակույթի տուն	25,000.0	24,879.5	24,879.0	100.0%
08	02	03	Մշակութային օբյեկտների շինարարություն	184,556.0	253,695.7	253,694.7	100.0%
			այդ թվում՝				
			-Շենքերի և շինությունների շինարարություն	184,556.0	253,695.7	253,694.7	100.0%
			այդ թվում՝				
			Գեղարքունիքի մարզ	76,940.0	146,644.5	146,643.6	100.0%
			Ծափաթաղի մշակույթի տուն	11,940.0	11,901.5	11,901.5	100.0%
			գ. Լիճքի մշակույթի տուն	65,000.0	134,743.0	134,742.1	100.0%
			Սյունիքի մարզ	107,616.0	107,051.2	107,051.1	100.0%
			Տեղ գյուղի մշակ.տան հիմնանորոգում	107,616.0	107,051.2	107,051.1	100.0%
09	06	01	Կրթական օբյեկտների հիմնանորոգում	139,040.0	138,717.5	138,717.5	100.0%
			այդ թվում՝				
			-Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	139,040.0	138,717.5	138,717.5	100.0%
			այդ թվում՝				
			Արարատի մարզի ք. Արարատի (Պ. Սևակի) թիվ 2 դպրոց	4,320.0	4,301.5	4,301.5	100.0%
			Տավուշի մարզի գ. Կոթիի դպրոց	134,720.0	134,416.0	134,416.0	100.0%
09	06	01	Կրթական օբյեկտների շինարարություն	258,210.0	257,631.8	252,833.9	98.1%
			այդ թվում՝				
			-Շենքերի և շինությունների շինարարություն	258,210.0	257,631.8	252,833.9	98.1%
			այդ թվում՝				
			Արարատի մարզի Զանգակատան միջն. դպրոցի Վարդաշատի մասնաճյուղ	58,990.0	58,773.0	58,773.0	100.0%
			Սյունիքի մարզի Եղեգի դպրոց 100 աշ.տեղով	70,000.0	69,888.7	65,090.8	93.1%

			Սյունիքի մարզի գ. Արավուսի դպրոցի կառուցում	92,030.0	91,864.1	91,864.1	100.0%
			Սյունիքի մարզի գ. Խոզնավարի դպրոց	37,190.0	37,106.0	37,106.0	100.0%
09	06	01	Մարզական օբյեկտների շինարարություն	6,130.0	6,109.5	6,109.5	100.0%
			այդ թվում՝				
			-Շենքերի և շինությունների շինարարություն	6,130.0	6,109.5	6,109.5	100.0%
			այդ թվում՝				
			Գեղարքունիքի մարզի ք. Վարդենիսի քաղաքապետարանի թիվ 2 մարզադպրոց	6,130.0	6,109.5	6,109.5	100.0%
09	06	01	Մարզական օբյեկտների հիմնանորոգում	70,910.0	66,904.0	66,904.0	100.0%
			այդ թվում՝				
			-Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	70,910.0	66,904.0	66,904.0	100.0%
			այդ թվում՝				
			Գեղարքունիքի մարզի ք. Ճամբարակի մարզադպրոց	70,910.0	66,904.0	66,904.0	100.0%
			ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ	826,411.5	269,822.4	269,822.4	100.0%
			այդ թվում՝				
			-Շենքերի և շինությունների շինարարություն	253,000.0	269,822.4	269,822.4	100.0%
			-Նախագծահետազոտական, գեոդեզիա-քարտեզագրական աշխատանքներ	75,466.1	-	-	
			-Այլ կապիտալ ծախսեր	497,945.4	-	-	
			այդ թվում՝				
03	01	02	Ազգային անվտանգության ապահովում	826,411.5	269,822.4	269,822.4	100.0%
			այդ թվում՝				
			-Նախագծահետազոտական, գեոդեզիա-քարտեզագրական աշխատանքներ	75,466.1			
			-Այլ կապիտալ ծախսեր	497,945.4			
			-Շենքերի և շինությունների շինարարություն	253,000.0	269,822.4	269,822.4	100.0%
			որից՝				
			‘Ջիլիզայի’ սահմանապահ ուղեկալի շինարարություն	253,000.0	269,822.4	269,822.4	100.0%
			ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ	35,000.0	34,975.0	34,904.4	99.8%
			այդ թվում՝				
			-Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	35,000.0	34,975.0	34,904.4	99.8%
			այդ թվում՝				
09	06	01	Կրթական օբյեկտների հիմնանորոգում	35,000.0	34,975.0	34,904.4	99.8%

			այդ թվում՝						
			-Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	35,000.0	34,975.0	34,904.4	99.8%		
			այդ թվում՝						
			Վարդենիկի թիվ 3 դպրոց	35,000.0	34,975.0	34,904.4	99.8%		
			ՀՀ ԱՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ	283,630.0	283,630.0	266,382.5	93.9%		
			այդ թվում՝						
			-Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	283,630.0	283,630.0	266,382.5	93.9%		
			այդ թվում՝						
09	06	01	Կրթական օբյեկտների հիմնանորոգում	283,630.0	283,630.0	266,382.5	93.9%		
			այդ թվում՝						
			-Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	283,630.0	283,630.0	266,382.5	93.9%		
			այդ թվում՝						
			բ. Կապանի թիվ 13 դպրոց	12,200.0	12,200.0	12,199.1	100.0%		
			գ. Շվանիձորի միջն.դպրոց	76,430.0	76,430.0	76,272.8	99.8%		
			բ. Կապանի թիվ 11 դպրոց	31,680.0	31,680.0	31,632.3	99.8%		
			գ. Որոտանի (Սիսիան) դպրոց	50,000.0	50,000.0	33,486.1	67.0%		
			բ. Կապանի թիվ 3 կրթահամալիրի հիմնանորոգում	67,020.0	67,020.0	66,492.6	99.2%		
			բ. Գորիսի թիվ 1 դպրոց	46,300.0	46,300.0	46,299.6	100.0%		
			ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ	71,670.0	71,670.0	70,067.2	97.8%		
			այդ թվում՝						
			-Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	71,670.0	71,670.0	70,067.2	97.8%		
			այդ թվում՝						
09	06	01	Կրթական օբյեկտների հիմնանորոգում	71,670.0	71,670.0	70,067.2	97.8%		
			այդ թվում՝						
			-Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	71,670.0	71,670.0	70,067.2	97.8%		
			այդ թվում՝						
			գ. Ռինդի միջն. դպրոց	71,670.0	71,670.0	70,067.2	97.8%		

* Սահմանված է 'ՀՀ 2008թվականի պետական բյուջեի մասին' ՀՀ օրենքով:

** Հաշվի են առնված ՀՀ կառավարության որոշումներով և պետական մարմինների ներկայացմամբ կատարված փոփոխությունները:

ՏԵՂԵԿԱՆՔ

«Ա պետական բյուջեի ընդհանուր միջոցներից սահմանամերձ տարածաշրջանների համար նախատեսված միջոցների վերաբերյալ

/հազ. դրամ/

2008թ.		2009թ.		2010թ.		2011թ.	
Պետական բյուջեով կատարված կապիտալ ծախսեր	Պետական բյուջեով կատարված կապիտալ ծախսեր սահմանամերձ համայնքներում	Պետական բյուջեով կատարված կապիտալ ծախսեր	Պետական բյուջեով կատարված կապիտալ ծախսեր սահմանամերձ համայնքներում	Պետական բյուջեով նախատեսված կապիտալ ծախսեր	Պետական բյուջեով նախատեսված կապիտալ ծախսեր սահմանամերձ համայնքներում	Պետական բյուջեով նախատեսված կապիտալ ծախսեր	Պետական բյուջեով նախատեսված կապիտալ ծախսեր սահմանամերձ համայնքներում
128452055.8	4767378	108590753.6	517315.9	62425058.9	1072856	74817911.5	664167

Տեղեկանք

«Վ պետական բյուջեով նախատեսված կապիտալ ծախսերի և «Վ սահմանամերձ համայնքներում պետական բյուջեով նախատեսված կապիտալ ծախսերի վերաբերյալ

2008թ		2009թ		2010թ		2011թ	
Պետական բյուջեով կատարված կապիտալ ծախսեր (հազ. դրամ) 2008թ	Պետական բյուջեով կատարված կապիտալ ծախսեր սահմանամերձ համայնքներում (հազ. դրամ) 2008թ	Պետական բյուջեով կատարված կապիտալ ծախսեր (հազ. դրամ) 2009թ	Պետական բյուջեով կատարված կապիտալ ծախսեր սահմանամերձ համայնքներում (հազ. դրամ) 2009թ	Պետական բյուջեով նախատեսված կապիտալ ծախսեր (հազ. դրամ) 2010թ	Պետական բյուջեով նախատեսված կապիտալ ծախսեր սահմանամերձ համայնքներում (հազ. դրամ) 2010թ	Պետական բյուջեով նախատեսված կապիտալ ծախսեր (հազ. դրամ) 2011թ	Պետական բյուջեով նախատեսված կապիտալ ծախսեր սահմանամերձ համայնքներում (հազ. դրամ) 2011թ
128452055.8	4767378	108590753.6	517315.9	62425058.9	1072856	74817911.5	664167
38.85812362	17.98474417	32.84986683	1.951553688	18.88424939	4.047306652	22.63322012	2.50554363

Պետական բյուջեով կատարված կապիտալ ծախսեր	Պետական բյուջեով կատարված և նախատեսված կապիտալ ծախսեր սահմանամերձ համայնքներում
------------------------------------------	---------------------------------------------------------------------------------

Պետական բյուջեով կատարված կապիտալ ծախսեր (հազ. դրամ) 2008թ	Պետական բյուջեով կատարված կապիտալ ծախսեր (հազ. դրամ) 2009թ	Պետական բյուջեով նախատեսված կապիտալ ծախսեր (հազ. դրամ) 2010թ	Պետական բյուջեով նախատեսված կապիտալ ծախսեր (հազ. դրամ) 2011թ	Պետական բյուջեով կատարված կապիտալ ծախսեր սահմանամերձ համայնքներում (հազ. դրամ) 2008թ	Պետական բյուջեով կատարված կապիտալ ծախսեր սահմանամերձ համայնքներում (հազ. դրամ) 2009թ	Պետական բյուջեով նախատեսված կապիտալ ծախսեր սահմանամերձ համայնքներում (հազ. դրամ) 2010թ	Պետական բյուջեով նախատեսված կապիտալ ծախսեր սահմանամերձ համայնքներում (հազ. դրամ) 2011թ
128452055.8	108590753.6	62425058.9	74817911.5	4767378	517315.9	1072856	664167

Պետական բյուջեով 1շնչի հաշվով կատարված կապիտալ ծախսեր				Պետական բյուջեով 1շնչի հաշվով կատարված և նախատեսված կապիտալ ծախսեր սահմանամերձ համայնքներում			
Պետական բյուջեով կատարված կապիտալ ծախսեր (հազ. դրամ) 2008թ	Պետական բյուջեով կատարված կապիտալ ծախսեր (հազ. դրամ) 2009թ	Պետական բյուջեով նախատեսված կապիտալ ծախսեր (հազ. դրամ) 2010թ	Պետական բյուջեով նախատեսված կապիտալ ծախսեր (հազ. դրամ) 2011թ	Պետական բյուջեով կատարված կապիտալ ծախսեր սահմանամերձ համայնքներում (հազ. դրամ) 2008թ	Պետական բյուջեով կատարված կապիտալ ծախսեր սահմանամերձ համայնքներում (հազ. դրամ) 2009թ	Պետական բյուջեով նախատեսված կապիտալ ծախսեր սահմանամերձ համայնքներում (հազ. դրամ) 2010թ	Պետական բյուջեով նախատեսված կապիտալ ծախսեր սահմանամերձ համայնքներում (հազ. դրամ) 2011թ
38.85812362	32.84986683	18.88424939	22.63322012	17.98474417	1.951553688	4.047306652	2.50554363

Հանրապետական միջին կատարված կապիտալ ծախսերը սահմանամերձ համայնքներում	Հանրապետական միջին կատարված կապիտալ ծախսերը ՀՀ-ում
-----------------------------------------------------------------------	----------------------------------------------------

Պետական բյուջեով կատարված կապիտալ ծախսեր սահմանամերձ համայնքներում (հազ. դրամ) 2008թ	Պետական բյուջեով կատարված կապիտալ ծախսեր սահմանամերձ համայնքներում (հազ. դրամ) 2009թ	Պետական բյուջեով նախատեսված կապիտալ ծախսեր սահմանամերձ համայնքներում (հազ. դրամ) 2010թ	Պետական բյուջեով նախատեսված կապիտալ ծախսեր սահմանամերձ համայնքներում (հազ. դրամ) 2011թ	Պետական բյուջեով կատարված կապիտալ ծախսեր (հազ. դրամ) 2008թ	Պետական բյուջեով կատարված կապիտալ ծախսեր (հազ. դրամ) 2009թ	Պետական բյուջեով նախատեսված կապիտալ ծախսեր (հազ. դրամ) 2010թ	Պետական բյուջեով նախատեսված կապիտալ ծախսեր (հազ. դրամ) 2011թ
93571444.95	93571444.95	93571444.95	93571444.95	93571444.95	93571444.95	93571444.95	93571444.95
128452055.8	108590753.6	62425058.9	74817911.5	128452055.8	108590753.6	1072856	664167

Հանրապետական միջին 1 շնչի հաշվով կատարված կապիտալ ծախսերը սահմանամերձ համայնքներում				Հանրապետական միջին 1 շնչի հաշվով կատարված կապիտալ ծախսերը ՀՀ-ում			
Պետական բյուջեով կատարված կապիտալ ծախսեր սահմանամերձ համայնքներում (հազ. դրամ) 2008թ	Պետական բյուջեով կատարված կապիտալ ծախսեր սահմանամերձ համայնքներում (հազ. դրամ) 2009թ	Պետական բյուջեով նախատեսված կապիտալ ծախսեր սահմանամերձ համայնքներում (հազ. դրամ) 2010թ	Պետական բյուջեով նախատեսված կապիտալ ծախսեր սահմանամերձ համայնքներում (հազ. դրամ) 2011թ	Պետական բյուջեով կատարված կապիտալ ծախսեր (հազ. դրամ) 2008թ	Պետական բյուջեով կատարված կապիտալ ծախսեր (հազ. դրամ) 2009թ	Պետական բյուջեով նախատեսված կապիտալ ծախսեր (հազ. դրամ) 2010թ	Պետական բյուջեով նախատեսված կապիտալ ծախսեր (հազ. դրամ) 2011թ
6.622287035	6.622287035	6.622287035	6.622287035	28.30636499	28.30636499	28.30636499	28.30636499
17.98474417	1.951553688	4.047306652	2.50554363	38.85812362	32.84986683	18.88424939	22.63322012

Հավելված N 1
Աղյուսակ N 22

Հաշվետվություն

Հայաստանի Հանրապետության 2009 թվականի պետական բյուջեով սահմանամերձ բնակավայրերի գծով ծախսերի վերաբերյալ՝ ըստ ծրագրերի, ծախսատեսակների և կատարողների (առանց նպատակային վարկերի և դրամաշնորհների հաշվին 2009 թվականին իրականացվելիք ծախսերի)

հազար դրամ

Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման			ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ	Տարեկան պլան*	Տարեկան ճշտված պլան**	Փաստ	Կատարման % ճշտված պլանի նկատմամբ
1	2	3	4	5	6	7	8
			Ընդամենը այդ թվում՝	7,138,628.8	7,313,885.5	5,172,315.9	70.7%
			Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր, այդ թվում՝	6,911,878.8	7,035,135.5	4,894,746.7	69.6%
			-Շենքերի և շինությունների շինարարություն	559,970.5	560,690.5	388,235.1	69.2%
